

ԼԵՂԱՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«15» հուլիսի 2002թ.

թիվ 30/Դ

«Առևտրի հարկի հաշվարկման և վճարման կարգի մասին»
հրահանգը հաստատելու մասին

Հիմք ընդունելով «Առևտրի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 16-րդ հոդվածը և նպատակ ունենալով պարզաբանել առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից լեռնային Դարաբաղի Հանրապետությունում առևտրի հարկի հաշվարկման և բյուջե վճարման հարցերը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Հաստատել «Առևտրի հարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգը:

Հարկային պետական
վարչության պետ
հ/ծ 3-րդ դասի պետական խորհրդական

Հ. ՂԱՐԱՄԱՆՅԱՆ

ՀՐԱՀԱՆԳ

Առևտրի հարկի հաշվարկման և վճարման կարգի մասին

Սույն հրահանգը մշակված է ի կատարում «Առևտրի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 16-րդ հոդվածի և նպատակ ունի պարզաբանել «Առևտրի հարկի մասին» ԼՂՀ օրենքի դրույթները՝ կապված առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ԼՂՀ-ում առևտրի հարկի հաշվարկման և բյուջե վճարման հարցերի հետ:

1.1. Առևտրի հարկը օրենքով սահմանված չափով և ժամկետներում ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար պետական բյուջե վճարվող՝ ավելացված արժեքի հարկին (այսուհետ՝ ԱԱՀ) և (կամ) շահութահարկին (եկամտահարկին) փոխարինող հարկ է:

Առևտրի հարկի ընդհանուր գումարի մեջ ԱԱՀ-ի հաշվարկային մեծությունը ընդունվում է 60%:

1.1.1. Առևտրային կազմակերպությունների համար առևտրի հարկը փոխարինում է ԱԱՀ-ին և (կամ) շահութահարկին:

1.1.2. Անհատ ձեռնարկատերերի համար առևտրի հարկը փոխարինում է ԱԱՀ-ին և (կամ) եկամտահարկին:

1.2. Առևտրի հարկ վճարողների համար առևտրի հարկով հարկվող գործունեության մասով կասեցվում են ԱԱՀ-ի և շահութահարկի (եկամտահարկի) գծով հարկային օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնությունները:

1.3. Առևտրի հարկ վճարողների առևտրի հարկով հարկվող օբյեկտը որոշելիս հաշվի չեն առնվում.

ա/ առևտրային կազմակերպություն լինելու դեպքում շահութահարկի գծով համախառն եկամտից նվազեցումները (ծախսեր, կորուստներ, այլ նվազեցումներ).

բ/ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում եկամտահարկի գծով համախառն եկամտից նվազեցումները (նվազեցվող եկամուտներ, անձնական²⁾ նվազեցումներ, ծախսեր).

1.4. Առևտրի հարկի հասկացությունը և առևտրի հարկ վճարողները.

ԼՂՀ-ում առևտրի հարկ վճարող են համարվում¹⁾ խանութների, կրապակների (տաղավարների), պահեստների¹⁾ միջոցով վաճառք իրականացնող առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերները, բացառությամբ սույն հրահանգի 1.5. Կետում նշվածներից:

Առևտրի հարկ վճարող համարվելու անհրաժեշտ պայմաններն են՝

ա/ խանութների, կրապակների (տաղավարների), պահեստների միջոցով վաճառք իրականացնելու դեպքում առանձին շինության (մշտական կամ ոչ մշտական) առկայությունը, այդ թվում տեխնիկական հեղուկների վաճառքի մասով³⁾.

բ/ (հանվել է)¹⁾

Սույնը չի տարածվում՝

- դեղատների վրա՝ դեղանյութերի, դեղամիջոցների և բժշկական պարագաների վաճառքի մասով.

- (հանվել է)

- (հանվել է)

- լցավորման կետերի միջոցով տեխնիկական հեղուկների վաճառքի մասով:¹⁾

- պահեստների, խանութների, կրապակների (տաղավարների) վրա՝ սեփական արտադրանքի, ինչպես նաև ընդհանուր հարկման համակարգով հարկվող գործունեության մասով մուտքագրված հիմնական միջոցների, արագամաշ առարկաների, հումքի և նյութերի իրացման մասով:²⁾

1.5. Առևտրի հարկ վճարողներ չեն կարող համարվել.

ա) «Հաստատագրված վճարների մասին» ԼՂՀ օրենքի համաձայն հաստատագրված վճար վճարող անձինք՝ գործունեության այդ մասով,

բ) անձինք, որոնց կողմից նախորդ տարկա ընթացքում լեռնային Դարաբաղի Հանրապետություն «ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված և չիրացված այնպիսի ապրանքների մնացորդը, որոնց ներմուծման համար մաքսասուրքի դրույթաչափը սահմանված է Օ տոկոս, ենթակա չեն ակցիզային հարկով հարկման և որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գամձվում, գերազանցում է մեկ միլիոն դրամը,⁴⁾

գ) այն անձինք, որոնք դադարել են համարվել այդպիսիք՝ մինչև տվյալ տարկա դեկտեմբերի 31-ը ներառյալ,

դ) ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրողները՝ իրենց սեփական արտադրության արտադրանքի խանութների, կրակների (տաղավարների), պահեստների միջոցով ինքնուրույնաբար իրացնան մասով:

Ե) «Արտոնագրային վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի համաձայն արտոնագրային վճար վճարող ամձիմք:⁴⁾

Սույն կետի «ա» և «դ» ենթակետերում նշված գործունեություն իրականացնող անձինք կարող են առևտուի հարկ վճարող դառնալ այլ գործունեության մասով, իսկ սույն կետի «բ» և «ե» ենթակետերում նշված⁴⁾ անձինք առևտուի հարկ վճարող դառնալ չեն կարող (այդ թվում այլ գործունեության մասով):

1.6. Արևորային կազմակերպությունները և անհատ ծեռնարկատերերը իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում սույն հրահանգի հավելված 1-ում բերված ծեփի հայտարարագիր:

1.6.1. Հաշվետու տարվա համար հայտարարագիրը հաշվառման վայրի հարկային մարմին է ներկայացվում հունվարի 1-ից մինչև 20-ը²⁾ ներառյալ:

Նոր ստեղծված (պետական գրանցում (հաշվառում) ստացած)⁴⁾ արևորային կազմակերպությունները և անհատ ծեռնարկատերերը հայտարարագիրը հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում մինչև պետական գրանցման (հաշվառման)⁴⁾ ամսվան հաջորդող ամսվա 1-ը:

Անկախ հայտարարագիր ներկայացնում հանգամանքի առևտուի հարկ վճարող են համարվում նաև այն հարկ վճարողները, որոնք բավարարում են «Արևորի հարկի մասին» ԼՂ օրենքի պահանջները:¹⁾

1.6.2. 2002 թ. 2-րդ կիսամյակից առևտուի հարկ վճարող համարվելու համար հայտարարագիր ներկայացրած անձինք 2002թ. հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը համարվում են այդպիսիք, եթե հայտարարագիրն իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացրել 2002թ. հուլիսի 1-ից 25-ը (ներառյալ):

1.7. Արևորի հարկ վճարողը դադարում է համարվել այդպիսին սույն հրահանգի 1.7.1. Կետի «ա» ենթակետում նշված դեպքում՝ այդ գործունեության մասով, իսկ 1.7.1 կետի «բ» ենթակետում նշված դեպքում՝ գործունեության բոլոր տեսակների մասով:¹⁾

Եթե հարկ վճարողը սույն կետի համաձայն առևտուի հարկ վճարող լինելու դադարեցման հիմքերի առկայության դեպքում շարունակում է համարել իրեն առևտուի հարկ վճարող և կատարված գործողությունները ձևակերպել սույն հրահանգի դրույթների համապատասխան, ապա այդ փաստը ստուգմամբ հայտնաբերելու դեպքում սույն հրահանգի 1.7.1 կետով¹⁾ սահմանված ժամկետներից սկսած հարկերը հաշվարկվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով: Այդ դեպքում հարկ վճարողի կողմից հաշվարկված առևտուի հարկի գումարները հաշվառվում են ընդհանուր սահմանված կարգով հաշվարկված շահութահարկից (Եկամտահարկից) և ԱԱՀ-ից սույն հրահանգի 1.1. կետի նշված համաձայնությամբ:

1.7.1. Արևորի հարկ վճարողը դադարում է համարվել այդպիսին, եթե:^{1), 4)}

ա) իրականացնում է սույն հրահանգի 1.5 կետի «դ» ենթակետով նախատեսված գործունեություն.

բ) երամսյակի ընթացքում նրա կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն «ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված այնպիսի ապրանքների ներմուծման ժամկետը, որոնց ներմուծման համար մաքսատուրքի դրույքաչափը սահմանված է Օ տոկոս, ենթակա չեն ակցիզային հարկով հարկման և որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում, գերազանցում է 250.0 հազար դրամը:^{1), 4)}

Սույն կետում նշված դեպքերում առևտուի հարկ վճարողը դադարում է համարվել այդպիսին՝ սահմանված փաստոր տեղի ունենալու պահից:³⁾

1.7.2. (համարվել է)¹⁾

2. Առևտուի հարկով հարկվող օբյեկտը

2.1. Առևտուի հարկով հարկվող օբյեկտ է համարվում հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում առևտուի հարկ վճարողի կողմից նատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների իրացնան շրջանառությունը՝ ներառյալ սույն հրահանգի 7.2. կետով սահմանված կարգով իրենց կողմից դրւու գրված հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարները:

Սույն հրահանգի իմաստով՝

- ապրանքների մատակարարում է համարվում գործարք, որն իրականացվում է ապրանքների և այլ գույքի սեփականության իրավունքը այլ անձի փոխանցելու միջոցով,

- ծառայությունների մատուցում է համարվում՝ գործարք, որն անմիջականորեն կապված է իրացնողի կողմից վաճառվող ապրանքների տեղափոխման հետ:

2.2. Ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման¹⁾ դեպքում իրացնան շրջանառությունը որոշվում է այդ գործարքների (գործարնությունների) ամբողջ արժեքից ելնելով:

Ապրանքների անհատույց մատակարարման, ծառայությունների անհատույց մատուցման, իմշաւեն նաև այն դեպքում, երբ դրանց դիմաց տվյալ գործարքների (գործարնությունների) համար սովորականի համեմատ կիրառվում են գործարքի իրական արժեքից 20 և ավելի տոկոսով ցածր գներ

(մասնակի հատուցում), առևտուի հարկով հարկվող օբյեկտ է համարվում գործարար շրջանակներում համեմատելի հանգամանքներում այդպիսի կամ նոյնանման գործարքների համար սովորաբար որպես հարկման օբյեկտ ընդունվող մեծությունը (գործարքի արժեքը), իսկ դրա բացակայության դեպքում՝ համանման պայմաններում գործող այլ հարկ վճարողի կողմից համեմատելի հանգամանքներում նոյնանման գործարքների համար սովորաբար որպես առևտուի հարկով հարկվող օբյեկտ ընդունվող մեծության (գործարքի արժեքի) 80 սովորությունը:^{*)}^{**)}

3. Առևտուի հարկի դրույքաչափը և հաշվարկումը

3.1. Բացարությամբ սույն կետի երկրորդ պարբերությամբ սահմանված դեպքի՝ առևտուի հարկի հաշվարկի ներկայացման հաշվետու ժամանակաշրջան է համարվում ամիսը:

«Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20^o-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում հայտարարագիր ներկայացրած անհատ ծեռնարկատերերի համար առևտուի հարկի հաշվարկի հաշվարկան հաշվետու ժամանակաշրջան է համարվում կիսամյակը:^{*)}

3.2. Առևտուի հարկ վճարողները յուրաքանչյուր ամսվա համար առևտուի հարկը հաշվարկում են հարկվող օբյեկտի նկատմամբ 3 տոկոս դրույքաչափով:

Օրինակ 1. Առևտուային կազմակերպությունը 2013 թվականին հանդիսանում է առևտուի հարկ վճարող: Փետրվար ամսվա բնական հյութերի վաճառքի մասով իրացման շրջանառությունը կազմել է 20.0 միլիոն դրամ:

2013թ. փետրվար ամսվա համար առևտուի հարկի գումարը կկազմի 0.6 միլիոն դրամ ($20.0 \times 3\%$):^{*)}^{**)}

3.2. Առևտուի հարկ վճարողները հաշվետու ժամանակաշրջանում հաշվարկված առևտուի հարկի գումարից ծեռքբերումների (ծախսեր) մասով նվազեցումներ չեն կատարում:^{*)}

3.3. (հանվել է)^{*)}

4. Եկամուտների (իրացման շրջանառության) և ծախսերի հաշվառումը

4.1. Առևտուի հարկ վճարողները եկամուտների (իրացման շրջանառության) և ծախսերի հաշվառումն իրականացնում են հաշվեգրման եղանակով:

Հաշվեգրման եղանակով հաշվառման դեպքում առևտուի հարկ վճարողը այդպիսին համարվելու հաշվետու ժամանակաշրջանում եկամուտների (իրացման շրջանառության) և ծախսերի հաշվառումն իրականացնում է՝ համապատասխանաբար ելնելով իր կողմից եկամուտների ստացման իրավունքը ծեռք բերելու կամ դրա համար այդ ծախսերը ճանաչելու պահից՝ անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից:

4.2. Հաշվեգրման եղանակով եկամուտները (իրացման շրջանառությունը) հաշվառելիս առևտուի հարկ վճարողը հաշվի է առնում հետևյալ առանձնահատկությունները:

ա/ Եկամտի ստացման իրավունքը համարվում է ծեռք բերված, եթե համապատասխան գումարը ենթակա է առևտուի հարկ վճարողին անվերապահ վճարման (հատուցման) կամ հարկատուն կատարել է գործարքից կամ պայմանագրից բխող պարտավորությունները, եթե նույնիսկ այդ իրավունքի բավարարման պահը հետաձգվել է կամ վճարումներն իրականացվում են մաս-մաս.

բ/ առևտուի հարկ վճարողի կողմից ծառայություններ մատուցելու դեպքում նշված իրավունքը համարվում է ծեռք բերված գործարքից բխող ծառայությունների մատուցումն ավարտելու պահից:

4.3. Առևտուի հարկով և ընդհանուր հարկման համակարգով և (կամ) հաստատագրված վճարով հարկվող գործունեություն իրականացնող առևտուային կազմակերպությունը կամ անհատ ծեռնարկատերը ընդհանուր արտադրական և ընդհանուր տնտեսական ծախսերը (օրինակ, կառավարման ապարատի աշխատավարձ, սոցիալական ապահովության վճարներ, կառավարման տեխնիկական միջոցների և ոչ արտադրական (ընդհանուր տնտեսական) նշանակության հիմնական միջոցների նորոգում, պահպանում և շահագործում, խորհրդատվական և տեղեկատվական ծառայություններ, գրասենյակային, փոստային, հեռախոսային, հեռագրային և նմանատիպ այլ ծախսեր), որոնք ըստ հարկման համակարգերի հնարավոր չեն առանձնացնել, բաշխում են ելնելով ընդհանուր համախառն եկամտի մեջ հարկման տարբեր համակարգերի գծով ստացված համախառն եկամուտների տեսակարար կշիռներից:^{*)}

4.4. Առևտուի հարկ վճարողի գործունեության հետ կապված փաստաթղթերով հիմնավորված ծախսերը հաշվառվում են^{**)} այն հաշվետու ժամանակաշրջանի ենթացքում, որում դրանք կատարվել են:

Եթե ծախսերը հիմնավորող փաստաթղթերը ստացվել են առևտուի հարկի հաշվարկը հարկային մարմին ներկայացնելուց հետո, ապա ծախսերը (մասնավորապես, էլեկտրաէներգիայի, կապի) հաշվառվում են այդ փաստաթղթերը ստացվելու հաշվետու ժամանակաշրջանում:

Առևտուի հարկ վճարողները այդպիսին համարվելու հաշվետու ժամանակաշրջանում, մինչև առևտուի հարկ վճարող համարվելը լրաց տարածքում ծեռքբերումների գծով մատակարարների

հարկային հաշիվներում առանձնացված և չհաշվանցված հետաձգված ԱԱՀ-ի այն գումարները, որոնք վճարվել են առևտուրի հարկ վճարող համարվելու ժամանակատվածում, հաշվառվում են որպես ծախս վճարման հաշվետու ժամանակաշրջանում, իսկ փաստաթղթերով չիհմնավորված այլ ծախսերը հաշվառվում են ամբողջ ծավալով:^{*)}

4.5. Առևտուրի հարկ վճարողները այդախին համարվելու հաշվետու ժամանակաշրջանում առևտուրի հարկով հարկվող գործունեության մասով վարում են Եկամուտների և ծախսերի հաշվառում, ինչպես նաև հարկային օրենսդրությանն առնչվող գրանցումներ՝ ԼՂՀ կառավարության սահմանաձևագործությունը:

Պարբերությունը ուժը կորցրած է ճանաչվել՝^{**) 4)}

5. Առևտուրի հարկի հաշվարկների ներկայացման և առևտուրի հարկի վճարման կարգը և ժամկետները

5.1. Առևտուրի հարկ վճարողները, բացառությամբ սույն կետի երկրորդ պարբերությամբ սահմանված առևտուրի հարկ վճարողների, իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում սույն հրահանգի հավելված 2-ով սահմանված ծևով առևտուրի հարկի ամսական հաշվարկ՝ մինչև այդ ամսվա հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

«Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20¹-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում հայտարարագիր ներկայացրած անհատ ծերնարկատեր առևտուրի հարկ վճարողները իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում սույն հրահանգի հավելված 2ա-ով սահմանված ծևով առևտուրի հարկի կիսամյակային (ամսական կտրվածքով) հաշվարկ՝ մինչև այդ կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ։^{**) 3)}

5.2. Առևտուրի հարկ վճարողները մինչև հարկային մարմինների կողմից ստուգումներ սկսելը նախորդ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացրած առևտուրի հարկի հաշվարկներում սկսվելու ինքուրույն հայտնաբերելու դեպքում կարող են հարկային մարմիններ ներկայացնել ճշտված հաշվարկներ, որի հիման վրա կատարվում է այդ ժամանակաշրջանների համար հարկային պարտավորությունների վերահաշվարկ, եթե դրանք չեն վերաբերում հարկային մարմինների կողմից ստուգվող կամ արդեն իսկ ստուգված ժամանակաշրջաններին։^{**) 3)}

(հանվել է)¹⁾

5.3. (հանվել է)¹⁾

5.4. Առևտուրի հարկ վճարողները հարկի գումարը յուրաքանչյուր ամսվա համար պետական բյուջե են վճարում մինչև հաջորդ ամսվա 20-ը ներառյալ։^{**) 3)}

5.5. Առևտուրի հարկ վճարողներն այսպիսին համարվելու հաշվետու ժամանակաշրջանում այդ գործունեության մասով շահութահարկի (Եկամտահարկի) կանխավճարներ չեն կատարում։

5.6. Միայն առևտուրի հարկով հարկվող գործունեություն իրականացնող հարկ վճարողները հարկային մարմիններին շահութահարկի հաշվարկ չեն ներկայացնում։^{1), 3), 4)}

5.7. (ուժը կորցրած է ճանաչվել)՝⁴⁾

6. Առևտուրի հարկ վճարողների կողմից այլ հարկերի վճարումը

6.1. Առևտուրի հարկ վճարողների համար այդախին համարվելու հաշվետու ժամանակաշրջանում պահպանվում է օրենսդրությամբ սահմանված դեպքերում գույքահարկի, իոդի հարկի, մաքսային սահմանին գանձվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ նաև այլ պարտադիր վճարների (այդ թվում՝¹⁾ բնապահպանական և բնօգտագործման վճարներ, պետական տուրքեր, տեղական տուրքեր և վճարներ²⁾) հաշվարկման և վճարման կարգը։

Առևտուրի հարկ վճարողների համար իրենց կողմից վճարած կամ վճարման ենթակա գույքահարկը, իոդի հարկը, օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ նաև այլ պարտադիր վճարները (այդ թվում՝³⁾ բնապահպանական և բնօգտագործման վճարներ, պետական տուրքեր, տեղական տուրքեր և վճարներ⁴⁾) ներառվում են ծախսերի մեջ։

6.2. Առևտուրի հարկ վճարողները այդախին համարվելու հաշվետու ժամանակաշրջանում օրենսդրությամբ սահմանված դեպքերում հանդիսանում են նաև հարկային գործակալ՝ շահութահարկի և Եկամտահարկի գծով, ինչպես նաև հաշվարկում և վճարում են ԱԱՀ՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված դեպքում²⁾։

Սույն հրահանգով կարգավորվող հարաբերությունների մասով բացառապես առևտուրի հարկ վճարողները ազատվում են «Եկամտահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով հարկային գործակալի համար սահմանված պարտավորությունների կատարումից, եթե առկա են Հայաստանի Հանրապետությունից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքը ապրանքների ներմուծման փաստը հաստատող փաստաթղթերը (ներմուծման հայտարարագրերը):³⁾ Առևտուրի հարկ վճարողները առևտուրի հարկով հարկվող

գործունեության մասով²⁾ ազատվում են «Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող մասհանումների (հատկացումների) մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված պարտավորությունների կատարումից:¹⁾

Սույն հրահանգով կարգավորվող հարաբերությունների մասով բացառապես անհատ ծերնարկատեր առևտորի հարկ վճարողների վրա չեն տարածվում «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով նախատեսված եկամուտի ստացման հետ կապված ծերք բերված ապրանքների համար կատարած ժախսների հիմնավորման նկատմամբ ներկայացվող պահանջները, եթե առկա են Հայաստանի Հանրապետությունից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածք ապրանքների ներմուծման փաստը հաստատող փաստաթղթերը (ներմուծման հայտարարագրերը):³⁾

Օրինակ 1'. 2009 թվականի հուլիսի 7-ին պետական գրանցում ստացած անհատ ծերնարկատերը, հարկերը հաշվարկել է բացառապես առևտորի հարկով հարկման համակարգով: 2009 թվականին ապրանքների մասուցումից ստացել է համախառն եկամուտ 12000.0 հազ. դրամ: Հայաստանի Հանրապետությունից կատարել է եկամուտների ստացման համար անհրաժեշտ առանց փաստաթղթերի հիմնավորման ծերքերումներ 8000.0 հազ. դրամի չափով, որի մասով առկա են Հայաստանի Հանրապետությունից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածք ապրանքների ներմուծման փաստը հաստատող փաստաթղթերը: Անհատ ծերնարկատերը կատարել է նաև փաստաթղթերով հիմնավորված 2500.0 հազ. դրամի ժախսներ (աշխատավարձ և չփոխհատուցվող հարկեր, վճարներ): Իրացված ապրանքի արժեքը կազմում է 6000.0 հազ. դրամ:

Տվյալ դեպքում 2009 թվականի ընթացքում ծերնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներից պարտադիր սոցիալական ապահովության վճարները հաշվարկվում է հետևյալ ձևով:

ա) համախառն եկամուտ	12000.0	հազ. դրամ.
բ) համախառն եկամտից նվազեցվող ժախսներ՝ այդ թվում՝	8500.0	հազ. դրամ,
- վաճառված ապրանքների ծերքերման արժեքը՝	6000.0	հազ. դրամ,
- փաստաթղթերով հիմնավորված ժախսներ	2500.0	հազ. դրամ,
գ) պարտադիր սոցիալական ապահովության վճար ($350.0 > 30.0$)	350.0	հազ. դրամ. ^{2), 3)}

6.3. Առևտորի հարկ վճարողները այդպիսին համարվելու հաշվետու ժամանակաշրջանում ապրանքների և ծառայությունների դիմաց նախակարարներին վճարած, վճարման ենթակա (ինչպես նաև ապրանքների ներմուծման ժամանակ մաքսային մարմիններում վճարած կամ վճարման ենթակա) անուղղակի հարկերի գումարները միացնում են այդ ապրանքների և ծառայությունների ծերք բերման արժեքին:

7. Առևտորի հարկ վճարողների կողմից հաշվարկային փաստաթղթերի դուրսգրումը

7.1. Առևտորի հարկ վճարողներն այդպիսին համարվելու հաշվետու ժամանակաշրջանում գործունեության այդ մասով իրենց կողմից վաճառվող ապրանքների և մատուցվող ծառայությունների գծով գնորդներին (ծառայություններից օգտվողներին) դուրս են գրում հաշվարկային փաստաթղթեր՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.2 Առևտորի հարկ վճարողներն մատակարարներից հարկային հաշիվներով ծերք բերված կամ մաքսային հայտարարագրերով ներմուծված²⁾ ապրանքների իրացման մասով կարող են դուրս գրել հարկային հաշիվներ: Ընդ որում, դուրս գրվող հարկային հաշիվներում նշված ԱԱՀ-ի գումարը չի կարող գերազանցել մատակարարների կողմից ներկայացված հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում՝ մաքսային հայտարարագրերում)²⁾ առանձնացված ԱԱՀ-ի գումարը:¹⁾

7.2.1. Սույն հրահանգի 7.2. կետով նախատեսված դեպքում հարկային հաշվում նշված²⁾ ԱԱՀ-ի գումարը ներառվում է առևտորի հարկով հարկով իրացման շրջանառության մեջ:

7.3. Առևտորի հարկ վճարողներն այդպիսին համարվելու հաշվետու ժամանակաշրջանում (ինչպես նաև հայտարարագրի ներկայացման համար սույն հրահանգի 1.6. կետով սահմանված ժամանակահատվածում) գործունեության այդ մասով իրենց կողմից դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերում սույն հրահանգի 7.2¹⁾ կետի պահանջների խախտումով ԱԱՀ-ի դրույքաչափի և գումարի վերաբերյալ նշում կատարելու դեպքում պարտավոր են առանձնացված հարկի գումարը վճարել պետական բյուջե առևտորի հարկի վճարման ժամկետում (մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ):^{2), 3)}

Օրինակ 2. Առևտորի հարկ վճարող հանդիսացող առևտորային կազմակերպությունը 2013թ. հունվար ամսում մատակարարներից ստացված հարկային հաշիվներով ծերք է բերել 900.0 հազար դրամ արժողությամբ ցեմենտ, որում առանձնացված ԱԱՀ-ի գումարը կազմել է 150.0 հազար դրամ: Նոյն ժամանակահատվածում 1080.0 հազար դրամ ընդհանուր գումարով ցեմենտը երկու հարկային հաշիվներով իրացրել է ԱԱՀ վճարող շինարարական կազմակերպության՝ համապատասխանարար՝ 600.0 հազար դրամ, ԱԱՀ՝ 120.0 հազար դրամ և 300.0 հազար դրամ՝ ԱԱՀ՝ 60.0 հազար դրամ, որոնց դիմաց կատարվել է բանկային վճարում:

Տվյալ ամսվա համար առևտորի հարկ վճարողի կողմից բյուջե վճարման ենթակա առևտորի հարկի գումարը կլազմի 30.6 հազար դրամ ($1020.0 \times 3\%$), իսկ ԱԱՀ-ի գումարը 60.0 հազար դրամ:

Ընդ որում ցենենտը ծեռք բերած ԱԱՀ վճարող կազմակերպության մոտ 60.0 հազար դրամ ԱԱՀ-ի գումարը ենթակա չէ հաշվանցման (հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարը ենթակա է վերածնակերպման այն հաշվետու ժամանակաշրջանում, որում պարզվել կամ արձանագրվել է դրա հաշվանցման անթույլատրելիությունը):

Օրինակ 2¹. Առևտորի հարկ վճարող հանդիսացող առևտորային կազմակերպությունը 2013թ. մարտ ամսում մատուկարարներից հարկային հաշվներով ծեռք է բերել 850.0 հազար դրամ ընդհանուր արժեքով յուղաներկ, որում առանձնացված ԱԱՀ-ի գումարը կազմել է 141.7 հազար դրամ: Նույն հաշվետու ժամանակաշրջանում առևտորի հարկ վճարողը ծեռք բերված յուղաներկը 1035.0 հազար դրամ գումարով՝ մեկ հարկային հաշվով, ամբողջությամբ իրացրել է ԱԱՀ վճարող համարվող կազմակերպությամբ, որում առանձնացված ԱԱՀ-ի գումարը կազմել է 172.5 հազար դրամ:

Տվյալ ամսվա համար առևտորի հարկ վճարողի կողմից բյուջե վճարման ենթակա առևտորի հարկի գումարը կլազմի 25.9 հազար դրամ ($(1035.0 - 172.5) \times 3\%$), ԱԱՀ-ի գումարը՝ 172.5 հազար դրամ:

Ընդ որում, յուղաներկը ծեռք բերած ԱԱՀ վճարող համարվող կազմակերպության մոտ 172.5 հազար դրամ ԱԱՀ-ի գումարը ենթակա չէ հաշվանցման (հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարը ենթակա է վերածնակերպման այն հաշվետու ժամանակաշրջանում, որում պարզվել կամ արձանագրվել է դրա հաշվանցման անթույլատրելիությունը):

Օրինակ 2². Առևտորի հարկ վճարողը Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ներմուծել է էլեկտրատեխնիկական ապրանքներ 3000.0 հազար դրամ մաքսային արժեքով, սահմանին վճարելով 660.0 հազար դրամ ԱԱՀ (մաքսային հայտարարագիրն առկա է): Փետրվար ամսում ծեռք բերված ապրանքները լրիվությամբ իրացվել են երեք հարկային հաշվներով 4140.0 հազար դրամ ընդհանուր գումարով: Ընդ որում, հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները կազմել են համապատասխանարար 600.0 հազար դրամ, 60.0 հազար դրամ և 30.0 հազար դրամ:

Կազմակերպությունը մինչև մարտի 20-ը ներառյալ պարտավոր է բյուջե վճարել 123.3 հազար դրամ առևտորի հարկը ($(4140.0 - 30.0) \times 3\%$) և 30.0 հազար դրամ ԱԱՀ: ^{*1, *2, *4)}

7.3.1. Սույն հրահանգի 7.3. Կետով նախատեսված դեպքում հարկային հաշվում նշված գումարը ներառվում է առևտորի հարկով հարկվող իրացման շրջանառության մեջ՝ առանց պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարի:

8. Հարկման ընդհանուր կարգից առևտորի հարկին անցնելը

8.1. Առևտորի հարկ վճարող դարձած և միաժամանակ ընդհանուր հարկման համակարգով և (կամ) հաստատագրված վճարով հարկվող գործունեություն չիրականացնող անձինք առևտորի հարկ վճարող դարձալուն նախորդող ժամանակահատվածներում իրացման շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարները գերազանցող՝ մատուկարարների հարկային հաշվներում առանձնացված, ինչպես նաև մաքսային մարմիններում վճարված (վճարման ենթակա) ԱԱՀ-ի գումարների մնացորդը, որը վերաբերվում է առևտորի հարկով հարկվող գործունեության մեջ օգտագործվող ծեռքերումների (մասնավորապես՝ ապրանքային) մնացորդներին, միացնում են ծախսերին (առևտորի հարկ վճարող համարվելու առաջին հաշվետու ժամանակաշրջանում):

8.2. Առևտորի հարկ վճարող դարձած և միաժամանակ ընդհանուր հարկման համակարգով և (կամ) հաստատագրված վճարով հարկվող գործունեություն իրականացնող անձինք որպես այդպիսիք դարձալու պահին նախորդող ժամանակահատվածներում իրացման շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարները գերազանցող՝ մատուկարարների հարկային հաշվներում առանձնացված, ինչպես նաև մաքսային մարմիններում վճարված (վճարման ենթակա) ԱԱՀ-ի գումարների մնացորդը, որը վերաբերվում է առևտորի հարկով հարկվող գործունեության մեջ օգտագործվող ծեռքերումների (մասնավորապես՝ ապրանքային) մնացորդներին, միացնում են ծախսերին (առևտորի հարկ վճարող համարվելու առաջին հաշվետու ժամանակաշրջանում):^{*2)}

8.3. Հանվել է^{*2)}

9. Առևտորի հարկով հարկման կարգից հարկման ընդհանուր կարգին անցնելը

9.1 Առևտորի հարկով հարկման կարգից հարկման ընդհանուր կարգին անցնելու պահից տվյալ տարվա մնացած ժամանակահատվածում հարկ վճարողները շահութահարկը (Եկանտահարկը), այդ թվում՝ կանխավճարները, և ԱԱՀ-ը հաշվարկում և վճարում են օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

9.2. Առևտորի հարկով հարկման կարգից հարկման ընդհանուր կարգին անցնելու պահից իրացման շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարներից չեն հաշվանցվում առևտորի հարկ վճարող համարվելու ժամանակահատվածում մատուկարարների հարկային հաշվներում առանձնացված, ինչպես նաև մաքսային հայտարարագրերում վճարված (վճարման ենթակա)^{*2)} ԱԱՀ-ի գումարները:

9.3. Ընթացիկ տարում առևտուի հարկով հարկման կարգից հարկման ընդհանուր կարգին անցնելիս հարկ վճարողները շահութահարկի (Եկամտահարկի) կանխավճարները հաշվարկում են նախորդ տարվա շահութահարկի (Եկամտահարկի) և (կամ) առևտուի հարկի գումարում ներառված սույն հրահանգի 1.1. Կետով սահմանված համամասնությամբ որոշվող շահութահարկի (Եկամտահարկի) գումարի հիման վրա՝ օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

Այդ դեպքում շահութահարկի (Եկամտահարկի) կանխավճարները հաշվարկվում և վճարվում են առևտուի հարկ վճարող լինելու դադարեցման պահից «Շահութահարկի մասին», («Եկամտահարկի մասին») և ըստ այլ դադարեցման պահից կանխավճարների համար սահմանված առաջիկա ժամկետում և չափերով:

Օրինակ 3.

Առևտուի հարկ վճարող համարվող կազմակերպության 2006թ. հաշվարկված առևտուի հարկի գումարը կազմել է 700.0 հազ. դրամ: 2007թ. ապրիլի 1-ից դադարել է համարվել այդպիսին և անցել հարկման ընդհանուր կարգի:

Տվյալ դեպքում կազմակերպությունը յուրաքանչյուր ամիս՝ սկսած ապրիլ ամսից պարտավոր է կատարել շահութահարկի կանխավճարներ 17.5 հազ. դրամի չափով ($700.0 \times 40\% \times 1/16$):²⁾

Օրինակ 4.

Առևտուային կազմակերպությունը 2003թ. 1-ին և 2-րդ եռամյակների ընթացքում հանդիսացել է առևտուի հարկ վճարող և հաշվարկել առևտուի հարկ՝ 1 մլն. դրամ՝ 3-րդ եռամյակից դադարելով լինել այդպիսին (անցել է հարկման ընդհանուր կարգին) և հաշվարկել շահութահարկ՝ 300.0 հազ. դրամ: 2004թ. հունվարի 1-ից նույնպես հարկերը հաշվարկում են ընդհանուր սահմանված կարգով:

2004թ. շահութահարկի կանխավճարներ հաշվարկելու համար հիմք է ընդունվում.

Նախորդ տարվա 1-ին կիսամյակում հաշվարկված առևտուի հարկի գումարում առանձնացված շահութահարկի գումարը, որը կազմում է 0.4 մլն. դրամ ($1.0 \text{ մլն} \times 40\%$) և 2-րդ կիսամյակում հաշվարկված 0.3 մլն. դրամ շահութահարկի հանրագումարը ($0.4 + 0.3 = 0.7 \text{ մլն. դրամ}$): 2004թ. համար հարկ վճարողը պետք է կատարի շահութահարկի կանխավճարներ 0.7 մլն. դրամի 75 %-ի չափով:

9.4. Առևտուի հարկով հարկման կարգից հարկման ընդհանուր կարգին անցնելիս ստացվող եկամուտներից չեն նվազեցվում առևտուի հարկ վճարող համարվելու ժամանակաշրջանին վերաբերող ծախսերը: Առևտուի հարկ վճարողի կողմից կանխավճարային ծևով կատարված ծախսերը ենթակա են հարկման ընդհանուր կարգին անցնելու ժամանակաշրջանին վերաբերող մասով նվազեցման:

Օրինակ 5.

Առևտուի հարկ վճարող համարվող «Ա» կազմակերպությունը 2007թ. հունվարին «Բ» կազմակերպության հետ կնքել է տարածքի վարձակալության պայմանագիր, որի համաձայն պարտավորվել է «Բ» կազմակերպությանը յուրաքանչյուր եռամյակ, մինչև եռամյակի առաջին ամսվա 5-ը վճարել 100.0 հազ. դրամ՝ առաջին եռամյակի համար վճարումը կատարելով հունվարի 3-ին: 2007թ. մարտի 1-ից դադարելով համարվել առևտուի հարկ վճարող «Ա» կազմակերպությունը անցել է հարկման ընդհանուր կարգի:

Տվյալ դեպքում «Ա» կազմակերպությունը մարտ ամսվա համար կանխավճարային ծևով կատարած 33.3 հազ. դրամ վարձակալական վճարը ($100.0/3$) որպես ծախս ճանաչում է ընդհանուր կարգով հարկման ժամանակատավածում:²⁾

9.5. Առևտուային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերները նախորդ տարիների ընթացքում ստացած վնասը չեն կարող նվազեցնել առևտուի հարկով հարկման դադարեցման պահից (հարկման ընդհանուր կարգին անցնելուց) հետո գործունեությունից ստացված համախառն եկամտից: Առևտուի հարկով հարկման ժամանակաշրջանում ստացած վնասը նույնպես ենթակա չեն նվազեցման:

9.6. Հանվել է²⁾

10. Պատասխանատվություն հարկային օրենսդրությունը խախտելու համար

10.1. Հարկային օրենսդրությունը խախտելու համար հարկ վճարողները պատասխանատվություն են կրում օրենսդրությամբ սահմանված կարգով:

10.2. Հարկ վճարողները սույն հրահանգի 1.6 կետով նախատեսվող հայտարարագրի մեջ սույն հրահանգի:

ա/ 1.5 կետի «բ» ենթակետով նախատեսված՝ ներմուծված և չիրացված ապրանքների վերաբերյալ⁴⁾ ոչ ճիշտ տեղեկություններ ներառելու դեպքում վճարում են տուգանք՝ սահմանաշակի նկատմամբ ապրանքների մնացորդը գերազանցող մասի 50 %-ի չափով:

բ/ 1.5 կետի «դ» ենթակետով նախատեսվող գործունեություն չիրականացնելու վերաբերյալ ոչ ճիշտ տեղեկություններ ներառելու դեպքում վճարում են տուգանք՝ 100.0 հազար դրամի չափով.

10.3. Առևտուի հարկով հարկվող շրջանառությունը թաքցնելու կամ պակաս ցույց տալու հետևանքով բյուջե վճարման ենթակա առևտուի հարկի գումարները թաքցնելու կամ պակաս ցույց տալու

համար վճարողներից գանձվում է թաքցված կամ պակաս ցույց տրված առևտութիւնի գումարը, ինչպես նաև սուզանք՝ այդ գումարի չափով:

Հարկվող օբյեկտը թաքցնելը կամ պակաս ցույց տալը հարկային մարմին ներկայացված առևտութիւնի հաշվարկում հարկվող օբյեկտը ցույց չտալը, պակաս ցույց տալը, կամ էլ գործունեություն չիրականացնելու մասին կեղծ տվյալներ ներկայացնելն է:²⁾

Հայտարարագիր (առևտորի հարկ վճարող համարվելու համար)	Փաստաթղթի հերթական համարը (լրացվում է հարկային մարմնի կողմից)
1. Հարկ վճարողի հաշվարման համարը	
2. Առևտորային կազմակերպության անվանումը	3. Անհատ ծերնարկատերի անուն, ազգանունը
4. Հասցե	5. Հեռախոսի համարը

6. Առևտորական օբյեկտների	
տեսակները (խանութ, կրպակ (տաղավար) պահեստ)	հասցեն

(հանվել է)^{*)}
 ա/ (ուժը կորցրած է ձանաչվել)^{*4), *5), *6)}
 բ/ (ուժը կորցրած է ձանաչվել)^{*6)}

Տեղյակ եմ սույն հայտարարագրի մեջ տրվող ոչ ճիշտ տեղեկությունների համար ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվությամբ

Հարկ վճարողի (պատասխանատու անձի) ստորագրություն	Հարկ վճարողի կնիքը	Սպասարկող ստորաբաժանման պետ՝ Տեսուչ՝
--	---------------------------	---

Հայտարարագրի ներկայացման ժամկետը
 _____ » _____ 200_թ.

Հայտարարագրը լրացվում է 2 օրինակից, որոնք ներկայացվում են հարկ վճարողի հաշվարման (գրանցման) վայրի սպասարկող ստորաբաժանում։ Սպասարկող ստորաբաժանման կողմից գրանցվելուց հետո 1 օրինակը հանձնվում է հարկ վճարողին։

Հայտարարագրի լրացման կարգը

[1] - Լրացվում է ԼՂՀ հարկային մարմնի կողմից տրամադրված հարկ վճարողի հաշվարման համարը (ՀՎՀՀ)

[2] - Լրացվում է առևտորային կազմակերպության լրիվ անվանումը

[3] - Լրացվում է անհատ ծերնարկատիրոջ անուն, ազգանունը

[4] - Լրացվում է հարկ վճարողի հասցեն (անհատ ծերնարկատիրոջ համար՝ բնակության հասցեն)

[5] - Լրացվում է հարկ վճարողի աշխատանքային (անհատ ծերնարկատիրոջ համար՝ բնակության վայրի) հեռախոսահամարը

[6] - Նշվում է առևտորական գործունեության իրականացման առևտորական օբյեկտների տեսակները և հասցեները

24

Առևտի հարկի հաշվարկ	Փաստաթղթի հերթական համարը (լրացվում է հարկային մարմնի կողմից)						
1. Հարկ վճարողի հաշվառման համարը							
2. Իրավաբանական անձի անվանումը կամ անհայտ ծեռնարկադիրոց անունը, ազգանունը							
3. Գրնչելու (բնակության) վայրը							
4. Հեռախոսահամարը							
5. Ներկայացման ամսաթիվը, ամիսը, դարեթիվը							

Հայվելու ժամանակաշրջանը՝ 20__ թ. _____ ամիս

6. Առևտութեական օբյեկտների

դեսակները (իսանութ, կրպակ (փաղավար), պահեսոյ)	հասցեն

7. Մադակարարներից սպացված հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում՝ մարսային հայդարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարը	X
7.1. հաշվեկու ամսվա սկզբում	
7.2. հաշվեկու ամսում սպացված	
8. Հաշվեկու ամսում իրացման ընդհանուր շրջանառությունը	
9. Առևտություն հարկ վճարողի կողմից հաշվեկու ամսում դուրս գրված հարկային հաշվում նշված ԱԱՀ-ի գումարը	X
9.1. մադակարարներից սպացված հարկային հաշվի (ներմուծման դեպքում՝ մարսային հայդարարագրի) հիման վրա	
9.2. առանց մադակարարներից սպացված հարկային հաշվի (ներմուծման դեպքում՝ մարսային հայդարարագրի)	
10. Հաշվեկու ամսում առևտություն հարկով հարկվող շրջանառությունը (8 - 9.2), այդ թվում՝	
10.1. ազարված շրջանառություն	
11. Առևտություն հարկի դրույքաչափը	
12. Հարկվող շրջանառության նկարմամբ հաշվեկու ամսում հաշվարկված առևտություն հարկի գումարը	
13. Հաշվեկու ամսում ապրանքների ծեռքբերման ծախսերի գումարը	
14. Առևտություն հարկի գումարից նվազեցվող գումարի հաշվարկման համար ապրանքների ծեռքբերման ծախսերի գումարի նկարմամբ դրույքաչափը	
15. Հաշվեկու ամսում առևտություն հարկի գումարից նվազեցվող գումարը	
16. Տախորդ ամսուներում ապրանքների ծեռքբերման ծախսերի մասով առևտություն հարկի գումարից չնվազեցված և հաշվեկու ամսի փոխանցված գումարը	
17. Ընդամենը հաշվեկու ամսում առևտություն հարկի գումարից նվազեցվող գումարը	
18. Հաշվեկու ամսում առևտություն հարկի նվազագույն գումարը (1%)	
19. Հաշվեկու ամսում հաշվարկված առևտություն հարկի գումարը	

20. Ապրանքների ձեռքբերման ժախսերի մասով առևտության հարկի գումարից չնվազեցվող և հաջորդ ամիսներ փոխանցվող գումարը	
21. Հաշվելու ամսում նվազեցման ենթակա առևտության հարկի գումարը	
22. Հաշվելու ամսում վճարման ենթակա առևտության հարկի գումարը	
23. Հաշվելու ամսում վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը (9.2-րդ կետի գումարը)	
24. Հարկային արգունություններից օգբվելու իրավունքը հասպարող հավասարագրի գործողության ժամկետում ներառված ամիսներին առևտության հարկով հարկվող շրջանառությունը՝ աճողական	

Առևտի հարկ վճարողների կողմից առևտրական գործունեության (վաճառքի) նպատակներով ձեռքբերված ապրանքների դիմաց մարդկարարներից սպացված հաշվարկային փաստաթղթերի վերաբերյալ գրեթեկություններ

Աղյուսակ

Տնօրեն (անհապտ ձեռնարկագրեր)

(սպորագուլթուն)

(անուն, ազգանուն)

45

Հայվապահ

(սպոսագործություն)

(անուն, ազգանուն)

Հաշվարկը լրացվում է երկու օրինակից, որոնք ներկայացվում են հարկային մարմին: **Հաշվարկը առնեն հարկային մարմին ներկայացնելու ուսարում՝ հարկային մասնին կողմնականացնելու հետո մեկ օրինակը հանձնվում է հարկ վճարողին:**

**ԿԱՐԳ
ԱՌԵՎՏՐԻ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿԻ ԼՐԱՑՄԱՆ**

1. Առևտրի հարկի հաշվարկը (այսուհետ՝ հաշվարկ) լրացվում է հազար դրամներով՝ սպորակեղի հեկո մեկ նիշի ճշգությամբ:
2. Հաշվարկի 1-ին կերում լրացվում է հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն):
 3. Հաշվարկի 2-րդ կերում լրացվում է իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ծեռնարկադիրոց անունը, ազգանուն:
 4. Հաշվարկի 3-րդ կերում լրացվում է իրավաբանական անձի գրնվելու վայրը կամ անհատ ծեռնարկադիրոց բնակության վայրը:
 5. Հաշվարկի 4-րդ կերում լրացվում է հարկ վճարողի աշխատանքային (անհատ ծեռնարկադիրոց համար՝ բնակության վայրի) հեռախոսահամարը:
 6. Հաշվարկի 5-րդ կերում լրացվում է հաշվարկի ներկայացման ամսաթիվը, ամիսը, դարեթիվը: Փոստով հաշվարկը ներկայացնելու դեպքում, անկախ հաշվարկում նշված ամսաթվից, հաշվարկի ներկայացման ամսաթիվ է համարվում փոստային բաժանմունքի ընդունման օրվա օրացուցային կնիքի արդադրագործությունը: Հաշվարկը առձեռն ներկայացվելու դեպքում ներկայացման օր է համարվում հաշվարկը հարկային մարմին հանձնելու օրը:
 7. Հաշվարկի 6-րդ կերում լրացվում են առևտրական գործունեության իրականացման օբյեկտների գումարները և հասցեները:
 8. Հաշվարկի 7.1-ին կերում լրացվում է հաշվեդրությունը ամսվա սկզբին ապրանքային մնացորդի մասով մաղակարարներից սպացված հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում՝ մաքսային հայդարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարը:
 9. Հաշվարկի 7.2-րդ կերում լրացվում է հաշվեդրությունը ամսում ծեղք բերված ապրանքների մասով մաղակարարներից սպացված հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում՝ մաքսային հայդարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարը:
 10. Հաշվարկի 8-րդ կերում լրացվում է հաշվեդրությունը ամսում առևտրի հարկ վճարողի կողմից մաղակարարված ապրանքների և մաղուցված ծառայությունների իրացման ընդհանուր շրջանառությունը՝ ներառյալ 9.1-ին և 9.2-րդ կերերի հանրագումարը:
 11. Հաշվարկի 9.1-ին կերում լրացվում է հաշվեդրությունը «Առևտրի հարկի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կերի պահանջների պահպանմամբ առևտրի հարկ վճարողի կողմից դուրս գրված հարկային հաշվում նշված ԱԱՀ-ի գումարները:
 12. Հաշվարկի 9.2-րդ կերում լրացվում է հաշվեդրությունը «Առևտրի հարկի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կերի պահանջների խախտմամբ առևտրի հարկ վճարողի կողմից դուրս գրված հարկային հաշվում նշված ԱԱՀ-ի գումարները:
 13. Հաշվարկի 10-րդ կերում լրացվում է հաշվեդրությունը «Առևտրի հարկի մասին» օրենքի 8-րդ և 9.2-րդ կերերի գումարները:
 14. Հաշվարկի 10.1-ին կերում լրացվում է հարկային արդունություններից օգտվելու իրավունքը հասպարող հավասպագրի հիման վրա հաշվեդրությունը ազարպած շրջանառությունը:
 15. Հաշվարկի 11-րդ կերում լրացվում է առևտրի հարկի դրույքաչափը (2021 թվականի համար՝ 2 դրույք, 2022 թվականից սկսած՝ 3 դրույք):

16. Հաշվարկի 12-րդ կերում լրացվում է հաշվելու ամսում հարկվող շրջանառության նկարմամբ հաշվարկված առևտութիւն հարկի գումարը ($12 = 10 \times 11$):

17. Հաշվարկի 13-րդ կերում լրացվում է հաշվելու ամսում ապրանքների ձեռքբերման ծախսերի գումարը:

18. Հաշվարկի 14-րդ կերում լրացվում է առևտութիւն հարկի գումարից նվազեցվող գումարի հաշվարկման համար ապրանքների ձեռքբերման ծախսերի գումարի նկարմամբ դրույքաչափը (2021 թվականի համար՝ 1 դրույք, 2022 թվականից սկսած՝ 2 դրույք):

19. Հաշվարկի 15-րդ կերում լրացվում է հաշվելու ամսում ապրանքների ձեռքբերման ծախսերի մասով առևտութիւն հարկի գումարից նվազեցվող գումարը ($15 = 13 \times 14$):

20. Հաշվարկի 16-րդ կերում լրացվում է նախորդ ամիսներում ապրանքների ձեռքբերման ծախսերի մասով առևտութիւն հարկի գումարից չնվազեցված և հաշվելու ամիս փոխանցված գումարը:

21. Հաշվարկի 17-րդ կերում լրացվում է հաշվելու ամսում առևտութիւն հարկի գումարից նվազեցվող գումարը ($17 = 15 + 16$):

22. Հաշվարկի 18-րդ կերում լրացվում է հաշվելու ամսում առևտութիւն հարկի նվազագույն գումարը ($10 \times 1\%$):

23. Հաշվարկի 19-րդ կերում լրացվում է հաշվելու ամսում հաշվարկված առևտութիւն հարկի գումարը ($\text{Եթե } (12-17) < 18, \text{ ապա } 19=18, \text{ եթե } (12-17) \geq 18, \text{ ապա } 19=(12-17)$):

24. Հաշվարկի 20-րդ կերում լրացվում է ապրանքների ձեռքբերման ծախսերի մասով առևտութիւն հարկի գումարից չնվազեցվող և հաջորդ ամիսներ փոխանցվող գումարը ($\text{Եթե } (12-17) < 18, \text{ ապա } 20=[17-(12-18)], \text{ եթե } (12-17) \geq 18 \text{ ապա } 20=0$):

25. Հաշվարկի 21-րդ կերում լրացվում է հաշվելու ամսում նվազեցման ենթակա առևտութիւն հարկի գումարը ($10.1/10 \times 100 \times 19/100$):

26. Հաշվարկի 22-րդ կերում լրացվում է հաշվելու ամսում վճարման ենթակա առևտութիւն հարկի գումարը (19-21):

27. Հաշվարկի 23-րդ կերում լրացվում է հաշվելու ամսում վճարման ենթակա ԱՍՀ-ի գումարը:

28. Հաշվարկի 24-րդ կերում լրացվում է հարկային արդունություններից օգտվելու իրավունքը հասկարող հավասարագրի գործողության ժամկերում ներառված ամիսներին առևտութիւն հարկով հարկվող շրջանառությունը՝ աճողական:

24

<p>Առևտի հարկի հաշվարկ (կիսամյակային հաշվարկ-հաշվետվություն ներկայացնող անհապ ձեռնարկադիրոց համար)</p>	<p>Փաստաթղթի հերթական համարը</p> <hr/> <p>(լրացվում է հարկային մարմնի կողմից)</p>
1. Հարկ վճարողի հաշվառման համարը	
2. Անհապ ձեռնարկադիրոց անունը, ազգանունը	
3. Բնակության վայրը	
4. Ներկայացման ամսաթիվը, ամիսը, դարբեթիվը	
	Համար ՀՀ դրամ

Հաշվելու ժամանակաշրջանը՝ 20__ թ. _____ կիսամյակ

5. Առևտության օրենսդրություն	
Կրթական պետական համակարգի վեհական մասնակիցները (հանուլք, կրթական պահապահ, պահեսուղի)	հասցեն

6. Հաշվելու կիսամյակի ամիսները						
7. Մարդաբանության սպազմած հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում՝ մաքսային հայրարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարը	X	X	X	X	X	X
7.1. ամսվա սկզբում						
7.2. ամսում սպազմած						
8. Հաշվելու կիսամյակում (ըստ ամիսների) իրացման ընդհանուր շրջանառությունը						
9. Առևտության վեցամյակում (ըստ ամիսների) դուրս գրված հարկային հաշվում նշված ԱԱՀ-ի գումարը	X	X	X	X	X	X
9.1. մարդաբանության սպազմած հարկային հաշվի (ներմուծման դեպքում՝ մաքսային հայրարարագրի) հիման վրա						
9.2. առանց մարդաբանության սպազմած հարկային հաշվի (ներմուծման դեպքում՝ մաքսային հայրարարագրի)						
10. Հաշվելու կիսամյակում (ըստ ամիսների) առևտության հարկավորությունը (8 - 9.2), այդ թվում՝ հարկավոր շրջանառությունը						
10.1. ազատված շրջանառություն						
11. Առևտության դրույցափոխություն						
12.Հարկավոր շրջանառության նկարմամբ հաշվելու կիսամյակում (ըստ ամիսների) հաշվարկված առևտության հարկավորությունը						
13. Հաշվելու կիսամյակում (ըստ ամիսների) ապրանքների ծեռքբերման ծախսների գումարը						

14. Առևտի հարկի գումարից նվազեցվող գումարի հաշվարկման համար ապրանքների ծեռքբերման ծախսերի գումարի նկարմամբ դրույքաչափը						
15. Հաշվելու կիսամյակում (ըստ ամիսների) առևտի հարկի գումարից նվազեցվող գումարը						
16. Նախորդ ամիսներում ապրանքների ծեռքբերման ծախսերի մասով առևտի հարկի գումարից չնվազեցված և հաշվելու կիսամյակում (ըստ ամիսների) փոխանցված գումարը						
17. Ընդամենը հաշվելու կիսամյակում (ըստ ամիսների) առևտի հարկի գումարից նվազեցվող գումարը						
18. Հաշվելու կիսամյակում (ըստ ամիսների) առևտի հարկի նվազագույն գումարը (1%)						
19. Հաշվելու կիսամյակում (ըստ ամիսների) հաշվարկված առևտի հարկի գումարը						
20. Ապրանքների ծեռքբերման ծախսերի մասով առևտի հարկի գումարից չնվազեցվող և հաջորդ ամիսներ փոխանցվող գումարը						
21. Հաշվելու կիսամյակում (ըստ ամիսների) նվազեցման ենթակա առևտի հարկի գումարը						
22. Հաշվելու կիսամյակում (ըստ ամիսների) վճարման ենթակա առևտի հարկի գումարը						
23. Հաշվելու կիսամյակում (ըստ ամիսների) վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը (9.2-րդ կետի գումարը)						
24. Հարկային արդունություններից օգնվելու իրավունքը հասպարող հավասարագործ գործողության ժամկետում ներառված ամիսներին առևտի հարկով հարկվող շրջանառությունը՝ աճողական						

Առևտի հարկ վճարողների կողմից առևտրական գործունեության (վաճառքի) նպատակներով ձեռքբերված ապրանքների դիմաց մարդկարարներից սպացված հաշվարկային փաստաթղթերի վերաբերյալ գրեթեկություններ

Անհար ձեռնարկագործ

(սպորագրություն)

(անուն, ազգանուն)

Հաշվարկը լրացվում է երկու օրինակից, որոնք ներկայացվում են հարկային մարմին: Հաշվարկը առծենու հարկային մարմինի ներկայացները դեպքում՝ հարկային մարմնի կողմից գրանցվելու հետո մեկ օրինակը հանձնվում է անհար ծեռարկատիրոջ:

ԿԱՐԳ
ԱՌԵՎԱՏՐԻ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿԻ ԼՐԱՑՄԱՆ
(ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿ-ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԱՆՀԱՏ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ ՀԱՄԱՐ)

1. Առևատրի հարկի հաշվարկը (կիսամյակային հաշվարկ-հաշվետվություն ներկայացնող անհատ ձեռնարկագրիրոջ համար) (այսուհետ՝ հաշվարկ) լրացվում է հազար դրամներով՝ սպորակետից հետո մեկ նիշի ճշգրությամբ:
2. Հաշվարկի 1-ին կերում լրացվում է հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն):
3. Հաշվարկի 2-րդ կերում լրացվում է անհատ ձեռնարկագրիրոջ անունը, ազգանունը:
4. Հաշվարկի 3-րդ կերում լրացվում անհատ ձեռնարկագրիրոջ բնակության վայրի հասցեն:
5. Հաշվարկի 4-րդ կերում լրացվում է հաշվարկի ներկայացման ամսաթիվը, ամիսը, դարեթիվը: Փոստով հաշվարկը ներկայացնելու դեպքում, անկախ հաշվարկում նշված ամսաթվից, հաշվարկի ներկայացման ամսաթիվ է համարվում փոստային բաժանմունքի ընդունման օրվա օրացուցային կնիքի արդարադարձը: Հաշվարկը առձեռն ներկայացվելու դեպքում ներկայացման օր է համարվում հաշվարկը հարկային մարմին հանձնելու օրը:
6. Հաշվարկի 5-րդ կերում լրացվում են առևատրական գործունեության իրականացման օբյեկտների փեսակները և հասցեները:
7. Հաշվարկի 6-րդ կերում լրացվում են հաշվետու կիսամյակի ամիսները՝ ըստ հաջորդականության:
8. Հաշվարկի 7.1-ին կերում լրացվում է հաշվետու կիսամյակի յուրաքանչյուր ամսվա սկզբին ապրանքային մնացորդի մասով մարդակարարներից սպացված հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում՝ մաքսային հայդարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարը:
9. Հաշվարկի 7.2-րդ կերում լրացվում է հաշվետու կիսամյակում (ըստ ամիսների) ծեռք բերված ապրանքների մասով մարդակարարներից սպացված հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում՝ մաքսային հայդարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարը:
10. Հաշվարկի 8-րդ կերում լրացվում է հաշվետու կիսամյակում (ըստ ամիսների) առևատրի հարկ վճարողի կողմից մարդակարարված ապրանքների և մարդուցված ծառայությունների իրացման ընդհանուր շրջանառությունը՝ ներառյալ 9.1-ին և 9.2-րդ կերերի հանրագումարը:
11. Հաշվարկի 9.1-ին կերում լրացվում է հաշվետու կիսամյակում (ըստ ամիսների) «Առևատրի հարկի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կերի պահանջների պահպանմամբ առևատրի հարկ վճարողի կողմից դուրս գրված հարկային հաշվում նշված ԱԱՀ-ի գումարները:
12. Հաշվարկի 9.2-րդ կերում լրացվում է հաշվետու կիսամյակում (ըստ ամիսների) «Առևատրի հարկի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կերի պահանջների խախորակած առևատրի հարկ վճարողի կողմից դուրս գրված հարկային հաշվում նշված ԱԱՀ-ի գումարները:

13. Հաշվարկի 10-րդ կերում լրացվում է հաշվեստու կիսամյակում (ըստ ամիսների) հարկվող շրջանառությունը՝ 8-րդ և 9.2-րդ կերերի դարբերությունը:

14. Հաշվարկի 10.1-ին կերում լրացվում է հարկային արդունություններից օգուվելու իրավունքը հասպատող հավասպագրի հիման վրա հաշվեստու կիսամյակում (ըստ ամիսների) ազատված շրջանառությունը:

15. Հաշվարկի 11-րդ կերում լրացվում է առևտի հարկի դրույքաչափը (2021 թվականի համար՝ 2 տոկոս, 2022 թվականից սկսած՝ 3 տոկոս):

16. Հաշվարկի 12-րդ կերում լրացվում է հաշվեստու կիսամյակում (ըստ ամիսների) հարկվող շրջանառության նկարմամբ հաշվարկված առևտի հարկի գումարը ($12 = 10 \times 11$):

17. Հաշվարկի 13-րդ կերում լրացվում է հաշվեստու կիսամյակում (ըստ ամիսների) ապրանքների ծեռքբերման ծախսերի գումարը:

18. Հաշվարկի 14-րդ կերում լրացվում է առևտի հարկի գումարից նվազեցվող գումարի հաշվարկման համար ապրանքների ծեռքբերման ծախսերի գումարի նկարմամբ դրույքաչափը (2021 թվականի համար՝ 1 տոկոս, 2022 թվականից սկսած՝ 2 տոկոս):

19. Հաշվարկի 15-րդ կերում լրացվում է հաշվեստու կիսամյակում (ըստ ամիսների) ապրանքների ծեռքբերման ծախսերի մասով առևտի հարկի գումարից նվազեցվող գումարը ($15 = 13 \times 14$):

20. Հաշվարկի 16-րդ կերում լրացվում է նախորդ ամիսներում ապրանքների ծեռքբերման ծախսերի մասով առևտի հարկի գումարից չնվազեցված և հաշվեստու կիսամյակում (ըստ ամիսների) փոխանցված գումարը:

21. Հաշվարկի 17-րդ կերում լրացվում է հաշվեստու կիսամյակում (ըստ ամիսների) առևտի հարկի գումարից նվազեցվող գումարը ($17 = 15 + 16$):

22. Հաշվարկի 18-րդ կերում լրացվում է հաշվեստու կիսամյակում (ըստ ամիսների) առևտի հարկի նվազագույն գումարը ($10 \times 1\%$):

23. Հաշվարկի 19-րդ կերում լրացվում է հաշվեստու կիսամյակում (ըստ ամիսների) հաշվարկված առևտի հարկի գումարը ($\text{Եթե } (12-17) < 18, \text{ ապա } 19=18, \text{ եթե } (12-17) \geq 18, \text{ ապա } 19=(12-17)$):

24. Հաշվարկի 20-րդ կերում լրացվում է ապրանքների ծեռքբերման ծախսերի մասով առևտի հարկի գումարից չնվազեցվող և հաջորդ ամիսներ փոխանցվող գումարը ($\text{Եթե } (12-17) < 18, \text{ ապա } 20=[17-(12-18)], \text{ եթե } (12-17) \geq 18 \text{ ապա } 20=0$):

25. Հաշվարկի 21-րդ կերում լրացվում է հաշվեստու կիսամյակում (ըստ ամիսների) նվազեցման ենթակա առևտի հարկի գումարը ($10.1/10 \times 100 \times 19/100$):

26. Հաշվարկի 22-րդ կերում լրացվում է հաշվեստու կիսամյակում (ըստ ամիսների) վճարման ենթակա առևտի հարկի գումարը (19-21):

27. Հաշվարկի 23-րդ կերում լրացվում է հաշվեստու կիսամյակում (ըստ ամիսների) վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը:

28. Հաշվարկի 24-րդ կերում լրացվում է հարկային արդունություններից օգուվելու իրավունքը հասպատող հավասպագրի գործողության ժամկետում ներառված ամիսներին առևտի հարկով հարկվող շրջանառությունը՝ աճողական:

^{*5)}

*1) ԼՂՀ ԿԱ ՀՊԾ պետի 18.01.06թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչության պետի 2002 թվականի հուլիսի 15-ի թիվ 30/Դ հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 6/Դ հրամանի խմբագրությամբ

*2) ԼՂՀ ԿԱ ՀՊԾ պետի 14.01.08թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչության պետի 2002 թվականի հուլիսի 15-ի թիվ 30/Դ հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 4/Ն հրամանի խմբագրությամբ

*3) ԼՂՀ ԿԱ ՀՊԾ պետի 29.12.09թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչության պետի 2002 թվականի հուլիսի 15-ի թիվ 30/Դ հրամանում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» թիվ 33/Ն հրամանի խմբագրությամբ

*4) ԼՂՀ ԿԱ ՀՊԾ պետի 31.01.13թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչության 2002 թվականի հուլիսի 15-ի թիվ 30/Դ հրամանում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» N 3-Ն հրամանի խմբագրությամբ

*5) ԼՂՀ ֆինանսների նախարարի 19.01.16թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչության 2002 թվականի հուլիսի 15-ի թիվ 30/Դ հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 16-Ն հրամանի խմբագրությամբ

*6) ԱՀ պետական Եկամուսների կոմիտեի նախագահի 15.03.21թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչության 2002 թվականի հուլիսի 15-ի թիվ 30/Դ հրամանում փոփոխություններ կատարելու մասին» N 41-Ն հրամանի խմբագրությամբ